ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարսեր Կարապետյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, Հայդելբերգի համալսարանի հրեագիտության ինստիտուտի մագիստրանտ

Պետություն-կրոն հարաբերակցության համատեքստում կրոնական ազատությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում[1]: Ընդունված է համարել, որ պետության մեջ կրոնական ազատության երաշխավորումը, «պետական եկեղեցու»[2] բացակայության պայմաններում, հնարավորություն է տալիս իրավունքը հնարավորինս զերծ պահել կրոնականության նոր դրսևորումներից՝ կրոնական դոգմաներին իրավական ուժ տալու միջոցով և մյուս կողմից կանխում է կրոնի հետագա քաղաքականացումը՝ կրոնն «աշխարհիկ» նպատակներով օգտագործելու ձևով[3]: Այսինքն, կարող ենք

[1] Այս առումով, թերևս, անհրաժեշտ է անդրադառնալ ընդհանարապես իրավունքի և կրոնի փոխազդեցության հիմնախնդրին: Այսպես, մասնագիտական գրականության մեջ իրավունքի և կրոնի միջև փոխազդեցության և դրա բնույթի վերաբերյալ տեսակետները տարբերվում են: Ոմանք ընդհանրապես ժխտում են այս երկու երևույթների միջև որևէ կապի առկայությունը՝ բացառություն նախատեսելով միայն «ընտանեկան արժեքների» համար: Այս ճամբարին հարողների կարծիքով՝ կրոնն առավելապես մասնավոր խնդիր է, Ալֆրեդ Նորդ Ուեյթհեդի բնորոշմամբ՝ այն, ինչ մարդն անում է մենակ: Մինչդեռ, իրավունքն առավելապես բնորոշվում է որպես հանրային նշանակության խնդիր և սոցիալական քաղաքականության առարկա: Մեկ այլ դեպքում՝ իրավունքը և կրոնը քննարկվում են բարոյականության (էթիկայի) հետ դրանցից յուրաքանչյուրի ունեցած կապի լույսի ներքո: Ըստ այդմ, իրավունքը հիմնված է որոշակի բարոյական՝ էթիկական նորմերի վրա, իսկ էթիկայի, այդ թվում՝ իրավական էթիկայի հիմքում ընկած է կրոնը: Այս տեսակետին հարողները, ինչպես նաև կրոնական բարոյագիտության կողմնակիցներն առաջ են քաշում պետության կողմից կրոնական էթիկային հակասող օրենքների դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Մասնագետների մեկ այլ խումբ, ընդհակառակը, հերքում է էթիկայի՝ որպես իրավունքի և կրոնի հիմնական կապող օղակ լինելու հանգամանքը՝ միաժամանակ նաև չժխտելով այս երկու տիրույթների միջև ամուր կապի գոյությունը: Այս տեսակետի համաձայն՝ իրավունքն ու կրոնը ոչ միայն գտնվում են որոշակի կապի մեջ, այլ ավելին՝ դրանցից յուրաքանչյուրը մյուսի արժեք է: Ըստ Հարոլդ Բերմանի բնորոշման. «Դա ոչ միայն և ոչ այնքան իրավական և կրոնական էթիկայի մասին է, որքան իրավունքի՝ կրոնական արժեքի և կրոնի՝ իրավական արժեքի մասին: Դա այս երկու հզոր ուժերի միջև փոխազդեցության դինամիկայի մասին է, որը միաժամանակ կազմում է սոցիալական կյանքի արտաքին և ներքին ասպեկտները: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Berman H. J.** Faith and Order: The Reconciliation of Law and Religion. Wm. B. Eerdmans Publishing, 1993:

[2] Նկատի ունենք եկեղեցի (կրոնական այլ հաստատություն), որը պետության կողմից պաշտոնապես ճանաչվում է, և որին օժանդակություն է տրամադրվում՝ որպես ազգային ինստիտուտի:

[3] Ընդունելով իրավունքի և կրոնի միջև առկա կապը՝ պրոֆ. Բերմանն անդրադառնում է նաև դրանց միջև առկա լարվածությանը՝ նշելով, որ այդ լարվածությունն անհրաժեշտ է այդ երևույթներից յուրաքանչյուրն իր տեղում պահելու համար՝ այսպիսով կանխելով մեկի կողմից մյուսի կլանումը: Այսինքն, չնայած լարվածությանը՝ այս երկու երևույթները մեկը մյուսի հետ դիալեկտիկական կապի մեջ են, և մեկը մյուսից անջատ չեն կարող ապահովել իրենց կենսունակությունը: Իր՝ վերը նշված «Հավատք և իրավակակարգ. իրավունքի և կրոնի հաշտեցումը» աշխատությունում խոսելով պետություն-կրոն հարաբերակցության մասին՝ հեղինակը, ընդունելով նշված երկու ոլորտների միջև լարվածության առկայությունը,

փաստել, որ կրոնական ազատությունը կարևոր նշանակություն ունի պետության և կրոնի միջև՝ անհրաժեշտ և ցանկալի հաշվեկշիռ պահպանելու առումով՝ դրանցից յուրաքանչյուրը «պահելով» իրենց սահմաններում[1]:

Կրոնի ազատությունը երաշխավորված էր դեռևս մանդատային իշխանության տարիներին[2]: Այսպես, 1922թ. կառավարական դեկրետի 83-րդ հոդվածի համաձայն՝ «Պաղեստինում բոլոր անձինք ունեն խղճի ազատություն, և դավանանքի ձևերի սահմանափակումները թույլատրելի են միայն հասարակական կարգի և բարոյականության պահպանման նկատառումներից ելնելով»[3]: Բոլորի համար երաշխավորված կրոնական ազատության ապահովման անհրաժեշտությունը նախատեսված էր նաև ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի թիվ 181 բանաձևով (1947թ.)[4]:

Իսրայելի պետության Անկախության հռչակագիրը ևս երաշխավորում էր բոլոր բնակիչների սոցիալական և քաղաքական իրավունքների հավասարությունը՝ անկախ կրոնից, ռասայից կամ սեռից, բացի այդ՝ երաշխավորվում էր նաև կրոնի և խղճի ազատությունը[5]: Հատկանշական է, որ Անկախության հռչակագիրը, իր անորոշ իրավական բնույթով հանդերձ, Իսրայելի պետությունում կրոնական ազատությունը երաշխավորող միակ փաստաթուղթն է: Օրենսդրական մակարդակով կրոնական ազատությունն Իսրայելում թեև երաշխավորված չէ, սակայն այն այսպես կոչված «դատական օրենսդրության» մաս է կազմում[6]:

Կրոնի ազատության իրավունքի համակողմանի ուսումնասիրության համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև կրոնից ազատության հիմնախնդրին: Մասնագիտական գրականության մեջ շարունակում է վիճելի մնալ այն հարցը, թե արդյոք

նշում է. «Լարվածությունը պետք է պահպանվի, եթե ցանկանում ենք իրավունքը զերծ պահել կրոնականության, այն է՝ կրոնական դոգմաներին իրավական ուժ տալու նոր դրսևորումներից, և մուս կողմից էլ կրոնը պետք է զերծ պահվի քաղաքականացման, այն է՝ կրոնն աշխարհիկ նպատակներով օգտագործելու նոր ձևերից: Նման լարվածության պահպանումն ի սկզբանե դրված էր մեր դաշնային և նահանգային սահմանադրությունների հիմքում, որ մի կողմից երաշխավորելով կրոնական ազատությունը և մյուս կողմից արգելելով կրոնականության հաստատումը՝ միաժամանակ երաշխավորում է թե՛ քաղաքական և թե՛ կրոնական ազատությունը: Այսինքն՝ մի կողմից կրոնական ազատության երաշխավորումը և մյուս կողմից «հաստատված» պետական կրոնի բացակայությունը երաշխավորում են այդ լարվածության առավել հաշվեկռված ձև ունենալը. դա այլևս լարվածություն չէ, այլ ավելի ճիշտ՝ այդ երկու ուժերի միջև հաստատված հաշվեկշված վերահսկողություն»: (**Berman H. J.,** նշված աշխատությունը, էջ 4-5):

[1] Ինչպես արդեն նշվել է, նշված պնդումը, թերևս, ճիշտ է, երբ պետության մեջ պետական եկեղեցի կամ այլ կերպ ասած՝ ճանաչված պետական կրոն չկա:

[2] Նկատի ունենք նախկին Պաղեստինի տարածքի նկատմամբ բրիտանական մանդատի գործողության ժամանակաշրջանը՝ 1918-1948թթ.:

[3] Կառավարական դեկրետի ամբողջական տեքստը տե՛ս https://unispal.un.org/DPA/DPR/unispal.nsf/0/C7AAE196F41AA055052565F50054E656:

[4] Բանաձևով նախատեսվում էր Պաղեստինի տարածքում երկու՝ հրեական և արաբական պետությունների ստեղծումը: Ամբողջական տեքստը տե՛ս http://www.mfa.gov.il/mfa/foreignpolicy/peace/guide/pages/declaration%20of%20establishment%20of%20state%20of%20israel.aspx:

[5] Իսրայելի պետության անկախության հռչակագիրն ընդունվեց բրիտանական մանդատի դադարեցման օրը՝ 1948թ. մայիսի 14-ին, ժողովրդական խորհրդի անդամների կողմից Իսրայելի պետության հիմնադրման հռչակմամբ:

[6] Իսրայելի պետությունում միայն որոշ իրավունքներ են, որ ամրագրված են մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում ընդունված երկու Հիմնական օրենքներով: Իրավունքների մեծ մասն այսպես կոչված «դատական օրենսդրության» մաս են կազմում, ինչը, միաժամանակ ենթադրում է, որ դրանք կարող են սահմանափակվել, նաև՝ խախտվել Քնեսեթի ընդունած օրենքների հիման վրա:

անհրաժեշտություն կա՞ կրոնից ազատությունը որպես առանձին իրավունք նախատեսելու, թե՞ բավարար է միայն ճանաչել և հռչակել անձի իրավունքների և ազատությունների անխախտելիությունը՝ անկախ խախտման հիմք հանդիսացող նորմերի կրոնական կամ աշխարհիկ բնույթից[1]: Կրոնից ազատության կամ այսպես կոչված աշխարհիկության իրավունքը կարող է տարբեր նշանակություն ունենալ: Սույնի շրջանակներում այն օգտագործվում է՝ բնորոշելու անձի՝ կրոնական հենքի վրա իր հիմնական իրավունքները և ազատությունները չխախտվելու շահը՝ որպես կրոնական ազատության բաղկացուցիչ մաս:

Այժմ անդրադառնալով պետություն-կրոն հարաբերակցության իսրայելյան մոդելին՝ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ այս առումով տեսակետները տարբեր են, հաճախ՝ իրարամերժ: Այսպես, ոմանք պնդում են, որ Իսրայելը «մաքուր» աշխարհիկ պետություն է՝ մատնանշելով պետական եկեղեցու բացակայությունը և դրանով պայմանավորված, օրինակ, օրենսդրությամբ պետության գլխի և ընդհանրապես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար հրեական կրոնին պատկանելու վերաբերյալ պահանջի բացակայությունը: Հեղինակների մեկ այլ խումբ էլ, ընդհակառակը, պնդում է, թե Իսրայելում առկա է պետական եկեղեցի՝ նկատի ունենալով ուղղափառ հուդայականության տեղն ու դերը[2]: Մինչդեռ, ոմանց կարծիքով, Իսրայելն ունի «քաղաքացիական կրոն»՝ մատնանշելով ներկայումս ազգային համարվող մի շարք խորհրդանիշերի և ինստիտուտների՝ իրենց հիմքում կրոնական իմաստ ու ծագում ունենալու հանգամանքը: Շատերն էլ նշում են, թե Իսրայելում պետությունն ու կրոնը տարանջատված չեն՝ որպես հիմնավորում բերելով պետության կողմից տարբեր կրոնական համայնքներին ցուցաբերվող օժանդակության փաստը[3]: Իսկ ոմանք էլ ընդհանրապես հերքում են Իսրայելի պետության աշխարհիկ բնույթը՝ մարդու անձնական կարգավիճակի հարցերում հրեական կրոնական իրավունքի՝ բացառիկ իրավասություն ունենալու հանգամանքով պայմանավորված[4]:

---

[1] Այս մոտեցման պայմաններում կրոն դավանելու ազատությունը ենթադրում է նաև կրոն չդավանելու ազատություն: Ինչպես նշվում է որոշ մասնագետների կողմից, անիմաստ է խոսել «աշխարհիկության իրավունքի» մասին, քանի որ աշխարհիկությունը պետության բնույթի մասին է խոսում. կարելի է ասել, թե ազատություններն առավելագույնս երաշխավորվում են, երբ պետությունն աշխարհիկ է: Հետևաբար, կրոնից ազատությունը կամ աշխարհիկության իրավունքը պետք է դիտարկել ոչ թե որպես քաղաքացիական իրավունք, այլ հանրային ազատություն: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Medina B.** Enhancing freedom of religion through public provision of religious services: The Israeli experiences // Israel Law Review, Vol. 39 N 2, 2006):

[2] Նշված պնդումը, թերևս, վերաբերում է Իսրայելի պետության՝ հրեական համայնքի հետ ունեցած փոխհարաբերություններին:

[3] Իսրայելի պետությունը ֆինանսապես օգնում է մեծաթիվ կրոնական կազմակերպություններին: Ինչպես նշում է պրոֆ. Բարաք Մեդինան, համեմատական իրավագիտության դիրքերից՝ իսրայելյան փորձը կարող է օգտակար լինել կառավարության կողմից կրոնական ծառայությունների ֆինանսավորման պոտենցիալ օգուտների, ինչպես նաև նման քաղաքականության իրականացման սահմանների առումով: Ըստ հեղինակի, այն կարող է տեսական հիմք հանդիսանալ ժողովրդավարական պետությունների կողմից կրոնի (կրոնների) պետականորեն համապարփակ ճանաչման մոդելի հետևանքները, ինչպես նաև նպատակահարմարությունը գնահատելիս: Տե՛ս Medina B, նշված աշխատությունը:

[4] Իսրայելում պետության և կրոնի միջև հարաբերակցության բնույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **Rubinstein A.** State and Religion in Israel // Journal of Contemporary History, Vol. 2, No. 4, Church and Politics, 1967:

Մասնագիտական գրականության մեջ թերևս գերիշխող է այն տեսակետը, որ Իսրայելում պետության հետ կրոնի հարաբերակցությունը չի կարելի տեղավորվել արևմտյան ժողովրդավարություններում ընդունված որևէ ձևաչափի մեջ, ինչը, ի թիվս այլնի, պայմանավորված է հուդայականության բնույթով, մասնավորապես՝ դրանում էթնիկի և կրոնականի միասնությամբ[1]: Մենք նույնպես հարում ենք հեղինակների այս խմբին, միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Իսրայելի պետությունում, այսպես կոչված, «պետական եկեղեցի» կամ պետական կրոն չկա. չնայած պետության հրեական բնույթին՝ հուդակայանությունն Իսրայելի պետության պաշտոնական կրոն հռչակված չէ, և ոչ էլ հրեական իրավունքն է կիրառվում իրավական համակարգում, բացառությամբ անձնական կարգավիճակի հետ կապված հարցերում:

Իսրայելի պետությունում պետականորեն ճանաչված կրոնի բացակայության մասին խոսելիս միաժամանակ պետք է խոսել պետության կողմից ճանաչված առանձին կրոնական համակարգերի և կրոնական ինստիտուտների մասին: Այսպես, Իսրայելի պետությունում ճանաչվում է առանձին կրոնական համայնքների[2] իրավասությունն անձնական կարգավիճակի հետ կապված հարցերում, ինչն ունի պատմական խորը արմատներ՝ սկիզբ առնելով դեռևս Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում գործող միլլեթական համակարգից[3]: Այս առումով կարելի է փաստել, որ Իսրայելի պետության մեջ առանձին՝ ոչ հրեական կրոնական համայնքների շրջանակներում կրոնական ազատությունն իրականում երաշխավորված է: Ինչ վերաբերում է Իսրայելի հրեական համայնքին, ապա պետության կողմից ճանաչված են միայն ուղղափառ հուդայականության դոգմաները և ինստիտուտները: Ըստ այդմ էլ կարելի է փաստել, որ կրոնական ազատությունը երաշխավորված է միայն հուդայականության ուղղափառ ուղղության հետ հարաբերություններում:

Այսպես, ինչպես նշում է պրոֆ. Դ. Կրեցմերը. «Հուդայականությունը նորադարձ[4] կրոն չէ, թեև ոչ հրեաների դավանափոխ լինելը ևս արգելված չէ: Այս առու-

---

[1] Ըստ պրոֆ. Ամնոն Ռուբենշտայնի՝ այս հարցում որոշակի ազդեցություն ունի նաև քաղաքական համակարգը. բազմակուսակցական պառլամենտական կառավարման ձևի պայմաններում Իսրայելի ուղղափառ-կրոնական կուսակցությունները մեծ դեր են խաղում երկրի քաղաքական համակարգում (Rubinstein A. նշվ. աշխ.):

[2] Ներկայումս, հրեական համայնքից բացի, Իսրայելում կան թվով 13 այլ ճանաչված կրոնական համայնքներ: Դրանք են՝ մուսուլմանական, արևելյան (ուղղափառ), լատինական (կաթոլիկ), հայկական գրիգորյան, հայկական կաթոլիկ, սիրիական կաթոլիկ, իթա քաղդեական, հունական կաթոլիկ-մելկիթական, մարոնական, սիրիական ուղղափառ, դրուզների կրոնական համայնքը (ճանաչվել է 1962թ.), եպիսկոպոսական-ավետարանչական (ճանաչվել է 1970թ.) և բահայի (ճանաչվել է 1971թ.) կրոնական համայնքները: Մինչդեռ որոշ քրիստոնեական համայնքներ, ինչպիսիք են, օրինակ՝ ղպտական համայնքը և եթովպիական ուղղափառ եկեղեցին, ինչպես նաև որոշ կրոնական ուղղություններ՝ հենց հրեական համայնքի ներսում պաշտոնապես ճանաչված չեն:

[3] Նշվածը, ինչպես նշում է իսրայելցի խոշոր սահմանադրագետ պրոֆ. Սյուզի Նավոտը, Իսրայելի իրավական համակարգի վրա օսմանյան իրավունքի ունեցած ամենաէական, եթե ոչ միակ ազդեցությունն է (**Navot S.** Israeli constitutional law. The Netherlands. Kluwer Law International, 2007, էջ 20):

[4] Հունարեն «պրոզելիտոս» տերմինն ունի տարբեր մեկնաբանություններ: Ընդհանուր առմամբ այն օգտագործվում է՝ բնորոշելու կրոնադարձ եղածներին: Իսկ զուտ աստվածաշնչյան համատեքստում «պրոզելիտ» տերմինը ծագում է հունական (կոյնե հունական) «proselytos» բառից և հունական հին կտակարանում նշանակում է «օտար», այսինքն՝ «նորեկ Իսրայելում»: Նույն տերմինը հունական նոր կտակարանում օգտագործվում է մ.թ. 1-ին դարում հուդայականություն ընդունածներին՝ հիմնականում հին հունական կրոնից դավանափոխ եղածներին, բնորոշելու համար:

մով հուդայականության պաշտոնական-իրավական կարգավիճակը[1] ոչ հրեաների իրավական կարգավիճակի վրա չի կարող ազդեցություն ունենալ: Իրականում մուսուլմանները, դրուզները, քրիստոնյաները, բահայիները և այլ կրոնների հետևորդներն օժտված են լիակատար կրոնական ազատությամբ»[2]: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, Իսրայելի պետությունում խնդրահարույց է հուդայականության ոչ ուղղափառ ուղղությունների հետևորդների կրոնական ազատության հարցը՝ պետության կողմից պաշտոնապես ճանաչված ուղղափառ հուդայական ինստիտուտների գործունեությամբ պայմանավորված[3]:

Այսպես, Իսրայելի պետությունում հուդայականության առանձին ուղղությունների (ռեֆորմիստական, պահպանողական և այլն) հետևորդները թեև օժտված են իրենց կրոնական համոզմունքները սեփական պատկերացումներին համապատասխան իրացնելու ազատությամբ[4], բայց նրանց ինստիտուցիոնալ կառույցները պաշտոնապես ճանաչված չեն Իսրայելի պետության կողմից: Նշվածը խիստ կարևոր է հատկապես ամուսնությունների և ամուսնալուծությունների պարագայում՝ նկատի ունենալով, որ նշված ուղղությունների ռաբբիներն օժտված չեն դրանք գրանցելու իրավազորությամբ: Իսրայելում հրեաների միջև ամուսնությունը՝ լինի ուղղափառ, պահպանողական, ռեֆորմիստական թե աշխարհիկ, փաստացի կատարում են միայն Իսրայելի գերագույն ռաբբիության[5] կողմից «ճանաչված» ռաբբիները, որոնք բացառապես ուղղափառ են[6]:

Նշվածը, անշուշտ, պայմանավորված է Իսրայելի պետության բնույթով: Իսրայելը՝ որպես ժողովրդավարական պետություն, իր տարբեր համայնքների համար մի կողմից ապահովում է կրոնական ազատությունը, մյուս կողմից, որպես հրեական պետություն, իր ազգաբնակչության մեծամասնություն կազմող հրեական հատվածի նկատմամբ պետաիշխանական ներգործության միջոցով պարտադրում է որոշակի կրոնական կենսակերպ, ինչը, մեծամասնության գնահատմամբ, պայմանավորված է Իսրայելի պետության հրեական դիմագծի պահպանման անհրաժեշտությամբ[7]: Նշված իրավակարգավորման հիմքը դրվեց նախքան պետության հիմնադրումը՝ սիոնիստական շարժման և ուղղափառ ու ուլտրաուղղափառ հուդայականության ներկայացուցիչների միջև հաստատված և մինչ օրս գրեթե անշեղորեն պահպան-

---

[1] Չպետք է շփոթել պետական կրոնի հետ. հուդայականությունն Իսրայելում ճանաչված չէ որպես պետական կրոն:

[2] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Kretzmer D.** Constitutional Law: Introduction to the law of Israel // Introduction to the Law of Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Կրոնական համոզմունքներն իրացնելու ազատությունը պետք է հասկանալ միայն որոշ վերապահումներով՝ սույն հոդվածում բերված հիմնավորմամբ:

[5] Գերագույն ռաբբիության իրավասությունների համար տե՛ս, օրինակ, **Strum P.** Women and the Politics of Religion in Israel // Human Rights Quarterly, Vol. 11, No. 4 (Nov., 1989), էջ 483-503:

[6] Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով տարբեր դեպքերի համար ամուսնությունների և ամուսնալուծությունների գրանցման տարբեր ընթացակարգեր են մշակվել և ներդրվել: Առավելապես հատնի են, օրինակ, «կիպրոսյան ամուսնությունների» պրակտիկան, երբ աշխարհիկ հրեաները, խուսափելով կրոնական ինստիտուտների կողմից իրենց ամուսնությունների գրանցումից, ամուսնանում են Կիպրոսում, իսկ գերագույն դատարանի որոշման ուժով այդ ամուսնությունների իրավական ուժը ճանաչվում է Իսրայելում: Տե՛ս **Kretzmer D.**, նշված աշխատությունը, էջ 49:

[7] Այս մասին Տե՛ս, օրինակ, **Rubinstein A.**, նշված աշխատությունը:

վող ստատուս-քվոյով[1]: Բացի այդ, Իսրայելի պետության կարևորագույն խնդիրներից մեկը հրեական մշակույթի և ժառանգության պաշտպանությունն ու խթանումն է, որոնք ընդգծված կրոնական նշանակություն ունեն:

Զուտ գաղափարախոսական-արժեքաբանական պատճառներից բացի, նշվածը նաև պայմանավորված է Իսրայելի պետության քաղաքական համակարգով. պետության կազմավորումից մինչ օրս որևէ կուսակցության չի հաջողվել Իսրայելի խորհրդարանում՝ Քնեսեթում, մեծամասնություն կազմել: Իրերի նման դրությունը պայմանավորված է իսրայելյան հասարակության խիստ բազմազանությամբ, ինչպես նաև քաղաքացիների՝ քաղաքական հարցերում ակտիվ ներգրավվածությամբ: Այսպիսի պայմաններում կուսակցությունները ստիպված են լինում կազմել կոալիցիաներ, երբեմն նաև՝ ազգային միասնության կոալիցիաներ: Կոալիցիոն կառավարություններում տարբեր կրոնական կուսակցություններ կարևոր դերակատարություն ունեն, որոնք ոչ միայն զուտ խորհրդանշական կերպով կոալիցիոն հուշագրերում պարտադրում են կառավարությանը հավատարմություն հայտնել կրոնական ստատուս-քվոյի վերաբերյալ նշված համաձայնագրին, այլև մեծապես պայմանավորում են ստեղծվելիք կառավարությունների օրակարգը[2]:

ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕНИЯ РЕЛИГИОЗНОЙ СВОБОДЫ В ИЗРАИЛЕ

Варсер Карапетян
Аспирант кафедры теории государства и права и истории ЕГУ,
Магистр института иудаики университета Гайдельберга
(Гайдельберг, Германия)

Статья рассматривает проблему обеспечения религиозной свободы в Израиле в контексте соотношения государство-религия.

Обсуждение данного вопроса направлено на разъяснение сути государства, а также вопросов, связанных с правовым статусом отдельных течений иудаизма в Израиле.

---

[1] Կրոնականության հարցերում ստատուս-քվոն հաստատվեց նախքան Իսրայելի պետության կազմավորումը՝ 1947թ. հունիսի 19-ին «Հրեական գործակալություն» սիոնիստական կազմակերպության անունից Դավիդ բեն Գուրիոնի՝ ուլտրաուղղափառ հուդայականության քաղաքական էսթաբլիշմենթին հասցեագրած նամակում: Այնտեղ բեն Գուրիոնը, ընդգծելով ապագա հրեական պետության աշխարհիկ բնույթը՝ զերծ կրոնական հարկադրանքից ու խտրականությունից, միաժամանակ երաշխավորում էր հրեական կրոնականության պահանջմունքների բավարարումը հետևյալ հիմնական հարցերում՝ ա) շաբաթը պետք է լիներ հանգստի օր, իսկ պետության ոչ հրեա ազգաբնակչությանը հնարավորություն կընձեռվեր ընտրելու հանգստի իրենց օրը, բ) քաշրութը՝ սննդակարգային նորմերը, պետք է պահպանվեր հանրային բոլոր այն հաստատություններում, որոնցից օգտվում էին հրեաները, գ) անձնական կարգավիճակի վերաբերյալ այդ ժամանակ գործող իրավունքը պետք է շարունակեր իր գործողությունը՝ հրեա հասարակության աշխարհիկ և կրոնական հատվածների միջև անջրպետ չանցկացնելու նկատառմամբ, և վերջապես՝ դ) կրոնական դպրոցների առանձնացված համակարգ պետք է ստեղծվեր:

[2] Տե՛ս, օրինակ, Reich B. Themes in the History of the State of Israel // The American Historical Review, Vol. 96, No. 5 (Dec., 1991), էջ 1468-1472: Իսրայելի քաղաքական համակարգի համար տե՛ս նաև Гейзель З. Политические структуры государства Израиль, М.: Институт изучения Израиля и Ближнего Востока, 2001:

THE ISSUE OF SECURING RELIGIOUS FREEDOM IN ISRAEL

Varser Karapetyan
PhD Student at the YSU Chair of Theory and History of State and Law,
MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies
(Heidelberg, Germany)

The article examines the issue of securing religious freedom in Israel in the context of state-religion correlation.

The examination of this question is aimed at the explanation of the character of the state, as well as of questions regarding legal status of different streams of Judaism in Israel.

Բանալի բառեր- *հրեական պետություն, հուդայականություն, կրոնական ազատություն, կրոնական ստատուս-քվո, կրոնական համայնք*
Ключевые слова: *еврейское государство, иудаизм, религиозная свобода, религиозный статус-кво, религиозная община*
Key words: *Jewish state, Judaism, religious freedom, religious status-quo, religious community*